Մրցույթ՝ «Երևանի թիվ 178 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, ֆիզկուլտուրայի (16 դասաժամ), տեխնոլոգիայի (5 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ), պատմության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորմամբ և հարցազրույցով: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/՝ , մեկ լուսանկար 3×4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
5. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 14-ին ՝ ժամը 14:00-ին,** Երևանի թիվ 178 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Խաղաղ Դոնի 25:
Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 47-02-00 հեռախոսահամարով: